

О МАНДАТЕ ДЕПУТАТА НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Г. Г. Акопян

В статье рассматривается мандат депутата Национального Собрания Республики Армении, обсуждаются вопросы изменения мандата и конституционного статуса члена законодательного органа в связи с конституционными преобразованиями в Республике Армения, а также выявляются отличия между императивным и свободным мандатами.

ABOUT THE DEPUTY'S MANDATE NATIONAL ASSEMBLY RA

Н. Н. Hakobyan

This article is devoted to the National Assembly deputy's mandate of the Republic of Armenia. The paper touches upon issues on legislative body member's mandate and changes of his/her constitutional status connected with constitutional reforms in the Republic of Armenia. It also discovers the peculiarities of imperative and free mandates.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
Իրավաբանական գիտությունների դոկտոր*

Հայաստանի Սահմանադրության առաջին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Իսկ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության կայացման ու զարգացման գործընթացում խիստ կարևորվում է սոցիալական պատասխանատվության ինստիտուտը: Սոցիալական պատասխանատվությունը հասարակության ու պետության գոյության և կենսագործունեության օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված իրողություն է, որն ապահովում է անձանց կողմից հասարակական համակեցության կանոնների, բարոյական արժեքային կողմնորոշումների ու սկզբունքների, իրավական նորմերի պահանջների կատարումը և դրանով իսկ համադրում անհատական, խմբային, հանրային և պետական շահերը: Սոցիալական պատասխանատվության հիմնական ձևերն են՝ բարոյական, քաղաքական, իրավաբանական պատասխանատվությունը, որոնք հասարակական հարաբերությունների սոցիալա-

կան կարգավորման կառուցակարգի անհրաժեշտ բաղադրիչներն են: Այժմ, երբ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական համակարգերում տեղի են ունեցել էական փոփոխություններ, կարևորվել են ազատական արժեքները և խիստ հրատապ են դարձել ազատության ու անենաթողության, իրավական հնարավորությունների ու սահմանափակումների հարաբերակցության ճշգրտման, ինչպես նաև իրավաբանական պատասխանատվության խորը, բազմակողմանի ուսումնասիրման և վերափնաստավորման խնդիրները: Ըստ այդմ, պահանջվում է նոր իրողությունների հաշվառմամբ՝ հետազոտել իրավաբանական պատասխանատվության տեսակները, պարզել դրանց առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները, բացահայտել իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակի՝ սահմանադրական պատասխանատվության դերն ու նշանակությունը: Իրավաբանական պատասխանատվության և նրա առանձին տեսակների պատշաճ ուսումնասիրությունը պահանջում է իրավաբանական պատասխանատվության տեսական հիմնախնդիրների վերհանում, բազմակողմանի վերլուծություն և հստակ մեկնաբանում: Լինելով իրավունքի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասը՝ իրավաբանական պատասխանատվությունն իր հերթին համակարգային կատեգորիա է, և ինչպես յուրաքանչյուր համակարգ՝ իրենից ներկայացնում է փոխադարձորեն կապված և միմյանց լրացնող մասերի ամբողջություն¹: Իրավաբանական պատասխանատվությունը, ինչպես և իրավունքի համակարգի մեջ ներառված մյուս կառուցվածքային մասերը բաղկացած են սկզբնական տարրերից՝ իրավանորմերից, որոնք ունեն ճյուղային պատկանելություն (միավորված են իրավունքի ինստիտուտների, ենթաճյուղերի և ճյուղերի մեջ): Իրավաբանական պատասխանատվության համակարգը բաղկացած է իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակներից²: «Իրավաբանական պատասխանատվությունն ընդհանուր իրավական, իր բովանդակությամբ՝ համալիր (ներառում է իրավունքի տարբեր ճյուղերը կազմող նորմերը), կառուցվածքով՝ առանձնահատուկ, նշանակությամբ՝ պահպանիչ, գործառության ինստիտուտ է, որը կարգավորում է դեղիկտային հասարակական հարաբերությունները՝ իրավախախտների պատժելու մեթոդով»³, գրում է Բ. Տ. Բազիլևը: Իրավական ինստիտուտները, այդ թվում՝ իրավաբանական պատասխանատվությունը սոցիալականորեն պայմանավորված, մշտապես զարգացող համակարգեր են, որոնցում, հասարակական հարաբերությունների զարգացման պահանջներին համապատասխան, օրինաչափորեն տեղի են ունենում փոփոխություններ, կայանում են իրավական նոր ինստիտուտներ, մի իրավունքի ճյուղի անհրաժեշտությունը վերանում է, ձևավորվում է նոր իրավունքի ճյուղ, համապատասխանաբար, տվյալ ճյուղի ներսում սաղմնավորվում ու զարգանում են իրավական անհրաժեշտ ինստիտուտներ, այդ թվում՝ իրավաբանական պատասխանատվության ճյուղային ինստիտուտը: Իրավաբանական պատասխանատվության համակարգը իրավունքի

¹ См'у Краткая философская энциклопедия, Под ред. **Е. Ф. Гувского, Г. В. Караблевоу, В. А. Лутченко**, М., 1994, էջ 415:

² См'у **Венгероу А. Б.** Теория государства и права, Учебник, 2-е изд-е, М., 2005, էջ 545:

³ См'у **Базилев Б. Т.** Юридическая ответственность (теоретические вопросы), Красноярск, 1985, էջ 47:

նորմերի և ինստիտուտների համակցությունն ու փոխհամագործակցությունն է, որոնց պահպանումն ապահովում է ամուր իրավակարգ, իսկ իրավախախտում կատարելու դեպքում դրանց կիրառումը վերականգնում է իրավակարգը: Իրավաբանական պատասխանատվության համակարգային միասնությունն ապահովվում է իրավական կարգավորման առարկայով և մեթոդով, իրավաբանական պատասխանատվության միասնական սկզբունքներով⁴: Իրավաբանական պատասխանատվության համակարգը կազմող պատասխանատվության բոլոր տեսակներն իրենց հատուկ մեթոդներով պահպանում են իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունները և համատեղ հանդես գալիս որպես իրավական համակարգի պահպանիչ կառուցակարգի կարևոր բաղկացուցիչ մաս⁵: Իրավաբանական պատասխանատվության համակարգը վերլուծելիս՝ հարց է ծագում, թե ինչ չափանիշով կամ չափանիշներով պետք է տարբերակել իրավաբանական պատասխանատվության տեսակները: Իրավունքի տեսության մեջ վիճահարույց է իրավաբանական պատասխանատվության դասակարգման հիմքերի սահմանման խնդիրը: Մասնագիտական գրականության և օրենսդրության մեջ ոչ միայն բացակայում է «իրավաբանական պատասխանատվություն» հասկացության միանշանակ ըմբռնումը, այլև միասնական դիրքորոշում չկա իրավաբանական պատասխանատվության տեսակների դասակարգման վերաբերյալ: Տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են իրավաբանական պատասխանատվության տեսակների դասակարգման բազմաթիվ հիմքեր՝ ճյուղային պատկանելությունը, սուբյեկտների կազմը, կիրառվող միջոցների բնույթը, իրավահարաբերությունների տեսակը, պետական հարկադրանքի աստիճանը (ուժը), պատասխանատվություն կիրառող սուբյեկտները և այլն: Ինչպես գրում է Դ. Ա. Լիպինսկին, «Գրականության մեջ՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակների դասակարգման հիմքեր, նշվում են ճյուղային, գործառութային, նպատակային, սուբյեկտիվ չափանիշները, ինչպես նաև իրավախախտման բնույթը, հարկադրանքի ուժը, կիրառվող միջոցի տեսակը, այդ միջոցը գործադրող սուբյեկտները և այլն»⁶: Օրինակ, Վ. Ա. Տարխովը իրավաբանական պատասխանատվության տեսակները դասակարգել է՝ ելնելով. պատասխանատվության միջոցից (անձնական կամ գույքային բնույթի), կիրառման ձևից (դատական և արտադատական, կամավոր և հարկադիր)⁷: Ա. Բ. Վենգերովը գտնում է, որ տեսականորեն իրավաբանական պատասխանատվության տեսակները տարբերվում են ըստ ներգործության միջոցների⁸: Իսկ ներգործության միջոցների բնույթը որոշվում է կատարված իրավախախտման բնույթով, հասարակական վտանգավորության աստիճանով և այլ հանգամանքներով: Ըստ Մ. Ի. Աբդուլակի

⁴ Տե՛ս **Хачатуров Р. Л.** Понятие системы юридической ответственности // Вестник Волжского университета им. В. Н. Татищева, Сер. Юриспруденция, 1998, Вып. 1, էջ 40:

⁵ Տե՛ս **Базылев Б. Т.** Об институте юридической ответственности // Советское государство и право, М., 1975, N 1, էջ 111:

⁶ Տե՛ս **Липинский Д. А.** Проблемы юридической ответственности, Под ред. Р. Л. Хачатурова, СПб., 2004, էջ 369:

⁷ Տե՛ս **Тархов В. А.** О юридической ответственности, Саратов, 1978, էջ 4-6:

⁸ Տե՛ս **Венгеров А. Б.** Теория государства и права, Учебник, 2-е изд-е, М., 2005, էջ 545:

և Ս. Ա. Կոմարովի՝ «Իրավաբանական պատասխանատվության տեսակները (քաղաքացիաիրավական, քրեաիրավական, վարչաիրավական, կարգապահական) ամբողջությամբ համընկնում են իրավախախտումների տեսակներին»⁹: Ն. Վ. Խրոպանյուկը, կատարված իրավախախտման բնույթից ելնելով, առանձնացնում է կարգապահական, վարչական, նյութական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության տեսակները¹⁰: Օ. Է. Լեյստը նշում է իրավաբանական պատասխանատվության տեսակների դասակարգման հետևյալ հիմքերը.

- ըստ իրավախախտումների տեսակի և կիրառվող սանկցիաների (քրեական, վարչական, կարգապահական, գույքային, քաղաքացիական) բնույթի,
- ըստ սանկցիաների կիրառման կարգի (դատական և վարչական),
- ըստ իրավախախտումների սուբյեկտի (անձնական պատասխանատվություն և կոլեկտիվ սուբյեկտների պատասխանատվություն)¹¹:

Իր հետագա ուսումնասիրություններում Օ. Է. Լեյստը գրում է՝ «Առաջնահերթ խնդիր է իրավաբանական պատասխանատվության տեսակների տիպաբանական խմբավորումը, դրանց խոշորացված դասակարգումը», և առաջարկում է տարբերակել «իրավավերականգնողական պատասխանատվություն և պատժիչ պատասխանատվություն»¹²: Ըստ հեղինակի՝ «Իրավաբանական պատասխանատվության հիմնական տեսակները կանխորոշվում են իրավախախտման համար կիրառվող սանկցիաների բովանդակությամբ: Ելնելով այն եղանակից, որով սանկցիաները ծառայում են իրավակարգի պահպանությանը, դրանք (սանկցիաները - Ռ. Յ.) բաժանվում են երկու հիմնական տեսակի՝ իրավավերականգնողական սանկցիաներ, որոնք անմիջականորեն ուղղված են իրավակարգին պատճառված վնասի վերականգնմանը և պատժիչ սանկցիաներ, որոնց խնդիրն է ներգործել իրավախախտի վրա՝ ընդհանուր և հատուկ կանխման նպատակով: Եվ քանի որ իրավակարգի պահպանությանը միտված սանկցիայում արտահայտված միջոցը կանխորոշում է սանկցիայի կիրառման և իրացման կարգը, ապա պատասխանատվության (ինչպես և սանկցիաների) հիմնական դասակարգումը համարվում է դրանց բաժանումը իրավավերականգնողական ու պատժական տեսակների»¹³: Մենք վերապահումով ենք մոտենում վերը նշված դասակարգմանը և գտնում ենք, որ սանկցիան, պայմանավորված լինելով իրավախախտման բնույթով, չի կարող իրավաբանական պատասխանատվության տեսակների տարանջատման հիմք հանդիսանալ: Միաժամանակ, համամիտ ենք Գ. Բ. Դանիելյանի հետ այն հարցում, որ «Թե՛ տեսությունում և թե՛ գործնականում առավել ընդունելի է համարվում պատասխանատվության տեսակների դասակարգումն ըստ այն իրավունքի ճյուղերի, որոնց նորմերը խախտվում են և միա-

⁹ Նույն տեղում, էջ 466:

¹⁰ Տե՛ս *Хропанюк Н. В.* Теория государства и права, Под ред. В. Г. Стрекозова, М., 1996, էջ 335:

¹¹ Տե՛ս *Лейст О. Э.* Санкции в советском праве, М., 1962, էջ 91-93:

¹² Տե՛ս *Лейст О. Э.* Основные виды юридической ответственности за правонарушения // Правоведение, М., 1977, N 3, էջ 32:

¹³ Տե՛ս *Лейст О. Э.* Виды юридической ответственности // Общая теория государства и права. Академический курс, т. 2, М., 1998, էջ 602:

ժամանակ՝ հանրորեն վտանգավորության աստիճանով պայմանավորված իրավախախտման բնույթի»¹⁴։ Իրավաբանական պատասխանատվության տեսակների դասակարգման ճյուղային չափանիշի կողմնակից է նաև Ռ. Լ. Խաչատուրովը։ Նա գտնում է, որ «Յուրաքանչյուր իրավունքի ճյուղին, իրավահարաբերությունների յուրաքանչյուր տեսակին ուղեկցում է իրավաբանական պատասխանատվության որոշակի տեսակը»¹⁵։ Համամիտ ենք հեղինակի հետ, որ պատասխանատվության դասակարգումն՝ ըստ ճյուղային պատկանելության, կարևոր նշանակություն ունի օրենսդրության և իրավակիրառ գործունեության կատարելագործման համար։ Այն առավել ընդունելի է քաղաքացիների, իրավակիրառ ատյանների համար և ներգործում է նրանց իրավագիտակցության ու իրավական մշակույթի մակարդակի վրա¹⁶։ Իսկ Ն. Ա. Չեչինան և Պ. Ս. Էլկինը գտնում են, որ «իրավունքի ճյուղի ինքնուրույնությունը հաստատող բնութագրական հատկանիշներից մեկը իրավաբանական պատասխանատվության ճյուղային տեսակի գոյությունն է»¹⁷, ինչը վկայում է իրավունքի համակարգը ճյուղերի բաժանելու և իրավաբանական պատասխանատվությունը դասակարգելու չափանիշների ընդհանրության մասին։ Այս կարծիքին է նաև Ի. Ս. Ջալցևը¹⁸։ Ճյուղային պատկանելության չափանիշի հիման վրա կատարվում է իրավաբանական պատասխանատվության տեսակների առավել խոշոր բաժանումը։ Յուրաքանչյուր իրավունքի ճյուղ ունի իր աղբյուրները՝ ի դեմս կոդիֆիկացված նորմատիվ իրավական ակտերի, որոնք բովանդակում են իրավաբանական պատասխանատվություն սահմանող նորմեր, ամրագրում պատասխանատվության իրացման դատավարական կարգը և այլն։ Իրավաբանական գրականության մեջ ճյուղային պատկանելության չափանիշի հիման վրա առանձնացվում են քաղաքացիական, քրեական, վարչական, նյութական, կարգապահական և սահմանադրական պատասխանատվության տեսակները։ Մասնավորապես, Յու. Կ. Կրասնովը, հիմք ընդունելով ճյուղային չափանիշը, նշում է պատասխանատվության ավանդական տեսակները (քրեական, վարչական, քաղաքացիական, կարգապահական, նյութական¹⁹)՝ չառանձնացնելով սահմանադրական պատասխանատվությունը որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ։ Հեղինակը թվարկում է պատասխանատվության տեսակներին բնորոշ հատկանիշները (իրավախախտման համապատասխան տեսակը, իրացման հատուկ կարգը, հարկադրանքի առանձնահատուկ միջոցները), որոնք հատուկ են նաև սահմանադրական պատասխանատվությանը։ Այսպես. ռետրոսպեկտիվ սահմա-

¹⁴ Տե՛ս **Դանիելյան Գ. Բ.** Վարչական պատասխանատվություն, Երևան, 2002, էջ 79-80։

¹⁵ Տե՛ս **Хачатуров Р. Л.** Понятие системы юридической ответственности // Вестник Волжского ун-та им. В. Н. Татищева, Сер. Юриспруденция, 1998, Вып. 1, էջ 42։

¹⁶ Տե՛ս **Хачатуров Р. Л.** Նշվ. աշխ., էջ 40։

¹⁷ Տե՛ս **Чечина Н. А., Элькин П. С.** Об уголовно-процессуальной и гражданско-процессуальной ответственности // Советское государство и право, М., 1973, N 9, էջ 33-34։

¹⁸ Տե՛ս **Зайцев И. М.** Гражданская процессуальная ответственность // Государство и право, М., 1997, N 7, էջ 93։

¹⁹ Տե՛ս **Краснов Ю. К.** Понятие юридической ответственности и ее виды // **Енгиварян Р. В., Краснов Ю. К.** Теория государства и права, М., 1999, էջ 237։

նադրական պատասխանատվության հիմքը սահմանադրական իրավախախտումն է, որի դեպքում իրավախախտի նկատմամբ իրացման հատուկ կարգով կիրառվում են հարկադրանքի առանձնահատուկ միջոցներ՝ սահմանադրաիրավական սանկցիաներ: Սահմանադրաիրավական հարաբերությունների և սահմանադրական իրավունքի ճյուղի զարգացմանը զուգընթաց արմատավորվեց սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը: Վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ գիտական ուսումնասիրման առարկա է դարձել սահմանադրական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ: «Այսօր արդեն անցյալում են մնացել սահմանադրական իրավունքում պատասխանատվության առկայության մասին վեճերը, և աքսիոմատիկ ճշմարտություն է դարձել սահմանադրական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակի գոյությունը»²⁰, - գրում է Գ. Ա. Կորոբովը: Մասնավորապես, Ն. Ի. Մատուզովը և Ա. Վ. Մալկոն գրում են, որ «Իրավաբանական պատասխանատվությունն իր բնույթով միատարր չէ, հետևաբար, այն բաժանվում է համապատասխան տեսակների հիմնականում ճյուղային հատկանիշով: Ըստ այդմ, տարբերվում են իրավաբանական պատասխանատվության հետևյալ տեսակները. քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, նյութական, դատավարական, սահմանադրական: Պատասխանատվության նշված բոլոր տեսակները ավանդական են և քաջ հայտնի, բացառությամբ սահմանադրական պատասխանատվության, որը սկսեց առանձնացվել համեմատաբար վերջերս: Սահմանադրական պատասխանատվությունը կիրառվում է, օրինակ, Նախագահի պաշտոնանկության, օրենսդիր մարմնի արձակման, կառավարության հրաժարականի և այլ ծներով: Գրականության մեջ և մամուլում բարձրացվում է իշխանության բարձրագույն մարմինների՝ Նախագահի, կառավարության, խորհրդարանի սահմանադրական պատասխանատվության մասին հատուկ օրենքի ընդունման հարցը՝ հնարավոր չարաշահումների, իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման, երկրի, մարդկանց ճակատագրին վերաբերող սխալ կամ ոչ ճիշտ որոշումների ընդունման (պետության քայքայում, պետության ամբողջականության խախտում, բնակչությանն իր խնայողական ավանդներից զրկում, աշխատավարձերի, կենսաթոշակների, նպաստների չվճարում, պատերազմի հրահրում, քաղաքացիների զանգվածային մահ և այլն) դեպքերում պատասխանատվության միջոցներ կիրառելու համար»²¹: Մեր կարծիքով, իրավա-

²⁰ Տե՛ս **Коропов Г. А.** Формирование гражданского общества и конституционно-правовая ответственность // Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, М., 2001, էջ 134:

²¹ Տե՛ս **Матузов Н. И., Малько А. В.** Теория государства и права, М.: Юрист, 2004, էջ 449-450; Այդ մասին մանրամասն տե՛ս նաև **Базылев Б. Т.** Юридическая ответственность, էջ 31-47; **Сенякин И. Н.** Понятие, признаки и виды юридической ответственности // Теория государства и права, Под ред. **Н. И. Матузова, А. В. Малько**, М., 2004, էջ 544-546; **Павуров А. С.** Принципы юридической ответственности // Теория государства и права, Под ред. **В. М. Корельского, В. Д. Первалова**, М., 1998, էջ 429-430; **Гойман В. И.** Юридическая ответственность: понятие, принципы и виды // Общая теория права и государства, Под ред. **В. В. Лазарева**, М., 1994, էջ 208-209; **Духно Н. А., Ивакин В. И.** Понятие и виды юридической ответственности // Государство и право, М., 2000, N 6, էջ 12-13 և այլն:

բանական պատասխանատվությունն ընդհանուր սկզբունքների և միասնական նպատակների վրա հիմնված իրավանորմերի բազմամակարդակ համակարգ է, որտեղ ճյուղային իրավանորմերը՝ որպես ենթահամակարգ, կազմում են պատասխանատվության իրենց տեսակը և, միաժամանակ, հանդիսանում իրավունքի համապատասխան ճյուղի ինստիտուտ: Ըստ այդմ, սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, և որպես այդպիսին՝ հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասը (ենթահամակարգը), միաժամանակ սահմանադրական իրավունքի կառուցվածքային տարր է, սահմանադրաիրավական առանձին ինստիտուտ: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի ձևավորումը պայմանավորված էր իրավահարաբերությունների սուբյեկտների սահմանադրաիրավական կարգավիճակի, սահմանադրական իրավախախտման իրավաբանական բնույթի, սահմանադրական իրավանորմերի կենսագործման առանձնահատկություններով, այդ նորմերի խախտման դեպքում գործադրվող պատասխանատվության միջոցների յուրահատկություններով և այդ միջոցների կիրառման հատուկ կարգով: «Որպեսզի ընդունվի իրավաբանական պատասխանատվության տեսակի ինքնուրույնությունը, այն պետք է ունենա իր հիմքերը, սուբյեկտները, պատասխանատվության աղբյուրները և սանկցիաները»²², - գրում է Ն. Մ. Կոլոսովան: Ինչ վերաբերում է սահմանադրական պատասխանատվությանը, ապա այն ունի իր հիմքերը, սուբյեկտները, աղբյուրներն ու սանկցիաները և իր որակական բնութագրով առանձնանում է իրավաբանական պատասխանատվության ընդհանուր համակարգում:

Իրավաբանական պատասխանատվության համակարգը պատասխանատվության ճյուղային տեսակների պարզ, մեխանիկական ամբողջություն չէ, այլ փոխհամաձայնեցված համակցություն, որտեղ կառուցվածքային տարրերը խմբավորված են որոշակի կարգով, ունեն թե՛ ընդհանուր հատկանիշներ և թե՛ միայն իրենց բնորոշ առանձնահատկություններ, ունեն փոխկապվածություններ և հարաբերական ինքնուրույնություն: Իրավաբանական պատասխանատվության բոլոր տեսակների համար ընդհանուր է.

- նրանցում արտահայտված պետական կամքի միասնությունը,
- այն իրավական համակարգի միասնությունը, որի շրջանակում դրանք գոյություն ունեն և գործում են,
- նորմատիվ իրավական ակտերում ամրագրումը, օրենսդրական սահմանումը,
- հիմնարար սկզբունքների, ելակետային դրույթների ընդհանրությունը,
- նպատակների և խնդիրների միասնությունը,
- որոշակի գործառնությունների իրականացման միտվածությունը:

Միաժամանակ, իրավաբանական պատասխանատվության տեսակները տարբերվում են իրենց կոնկրետ բովանդակությամբ և էությամբ, աղբյուրներով ու հիմքերով, ազդեցության ոլորտներով, սուբյեկտների շրջանակով և սանկցիաներ-

²² См. **Колосова Н. М.** Конституционная ответственность в Российской Федерации: Ответственность органов государственной власти и иных субъектов права за нарушение конституционного законодательства Российской Федерации, М.: Городец, 2000, էջ 26:

րով, կիրառման կարգի առանձնահատկություններով: Ա. Գ. Վաղարշյանի դիտարկմամբ՝ «Հանրային-իրավական պատասխանատվության տեսակ է համարվում սահմանադրական պատասխանատվությունը, որ վրա է հասնում սահմանադրական նորմերի խախտման համար, ի դեմս այն անբարենպաստ հետևանքների, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ և այլ օրենքներով, եթե Սահմանադրությունը վկայակոչում է դրանք»²³: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է նեգատիվ (ռետրոսպեկտիվ) սահմանադրական պատասխանատվության հետևյալ միջոցները.

- ՀՀ Նախագահի պաշտոնանկությունը,
- ՀՀ Ազգային ժողովի արձակումը,
- ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելը,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի (համայնքապետի) պաշտոնանկությունը,
- քաղաքական կուսակցության գործունեության արգելումը,
- ՀՀ օրենքը կամ այլ նորմատիվ իրավական ակտը հակասահմանադրական և անվավեր ճանաչելը և այլն:

Սահմանադրաիրավական սանկցիաները բնորոշ չեն իրավաբանական պատասխանատվության ոչ մի այլ տեսակի և կիրառվում են սահմանադրական պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ սահմանադրական լիազորությունները չարաշահելու դեպքերում: Սահմանադրական պատասխանատվությունը բնութագրվում է նաև հատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտներով: Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել՝

- բարձրագույն պաշտոնատար անձինք, ովքեր ունեն անձեռնմխելիության իրավունք (Նախագահ, պատգամավոր, դատավոր), և, ըստ այդմ, նախատեսված է նրանց սահմանադրական պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգ,
- կոլեգիալ մարմինները (ՀՀ Ազգային ժողով, կառավարություն, տեղական ինքնակառավարման մարմին, ընտրական հանձնաժողով, քաղաքական կուսակցություն),
- սահմանադրական իրավահարաբերությունների մասնակից ֆիզիկական ու իրավաբանական անձինք:

Այսպիսով, կարող ենք սահմանել, որ՝

1. Իրավաբանական պատասխանատվությունը համալիր իրավական ինստիտուտ է, որը կոչված է պաշտպանելու օրինականությունն ու իրավակարգը, երաշխավորելու մարդու իրավունքներն ու ազատությունները, կանխելու իրավախախտումները և նպաստելու սուբյեկտների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարմանը:

2. Իրավաբանական պատասխանատվությունը բաղկացած է իրավախախտումների իրավաբանական կազմեր և պետաիրավական հարկադրանքի միջոցներ նախատեսող իրավանորմերից, որոնք միավորվում են ընդհանուր սկզբունքներով, նպատակներով և գործառույթներով և կոչված են ապահովելու

²³ Տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.** Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), Երևան, 2010, էջ 187-188:

իրավունքի ընդհանուր համակարգի գործողությունն ու պաշտպանությունը:

3. Իրավաբանական պատասխանատվության ամբողջական համակարգում ունենալով ներքին միասնություն՝ պատասխանատվության ճյուղային տեսակները, միաժամանակ, ունեն իրենց յուրահատկությունները, որոնցով բնութագրվում են որպես պատասխանատվության ինքնուրույն տեսակ, ներազդում հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի վրա՝ կատարելով կարևոր դեր սոցիալական համակարգի իրավական կարգավորման ընդհանուր կառուցակարգում:

4. Սահմանադրական պատասխանատվությունը բոլոր չափանիշներին համապատասխանող իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, սահմանադրական իրավանորմների համակցություն, որը մի կողմից սահմանում է սահմանադրական իրավախախտումների կազմերը և նախատեսում սահմանադրաիրավական սանկցիաներ, իսկ մյուս կողմից՝ նպաստում սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարմանը, սահմանադրական իրավախախտումների կանխմանը, ՀՀ Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովմանը, սահմանադրական իրավակարգի և օրինականության հաստատմանը:

5. Որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ, սահմանադրական պատասխանատվությունը սահմանադրական իրավանորմների իրականացման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, պետական իշխանության բաժանման, իշխանության ճյուղերի միջև «զսպումների ու հակակշիռների» ապահովման, սահմանադրական բախումների կանխման և հակասությունների լուծման կառուցակարգի անհրաժեշտ տարր է:

КОНСТИТУЦИОННАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ КАК САМОСТОЯТЕЛЬНЫЙ ВИД ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Р. Х. Акопян

В статье рассматривается институт конституционной ответственности как самостоятельный вид юридической ответственности. Обсуждаются понятие, значение, виды юридической ответственности, дается перечень принципов и критерии классификации юридической ответственности, выявляются общие и специфические черты основных видов юридической ответственности, а также отличительные признаки конституционной ответственности.

CONSTITUTIONAL RESPONSIBILITY AS AN AUTONOMOUS KIND OF LEGAL RESPONSIBILITY

R. Kh. Hakobyan

The article concerns the constitutional responsibility as an autonomous kind of legal responsibility. It analyses the concept of legal responsibility, its meaning, types, giving the basic criteria and principles of the classification of legal responsibility. It also discovers the general and special features of the main types of legal responsibility as well as discovering the characteristics typical to constitutional responsibility.